վանքը՝ Մուշեղ եւ Գայլ-Վահանի գերեզմանները: Իշխանագամ գիւղի եկեղեցին՝ Վարդ Պատրիկի գերեզմանը:

Բայց կային վանքեր եւ եկեղեցիներ, որոնք պահում էին զանազան սուրբերի մարմնի փշրանքները, անփոփած ոսկու եւ արծաթի մէջ: Օրինակ — Վանայ սուրբ Վարդանի եկեղեցումն էր Մամիկոնեան Վարդանի մէկ մատը: Մշոյ սուրբ Կարապետայ վանքումն էր սուրբ Ղեւոնդայ մասունքները: Կային վանքերում եւ այլ սրբութիւններ, որպէս Ռոստանայ վանքը պահում էր իր մէջ այն խաչը, որ Սահակ պարթեւը տոեց իր թոռին — Վարդանին, եւ Քրիստոսի այդ խաչակիր զինորը, Աւարայրի դաշտում ընկած ժամանակ, արձակեց իր պարանոցեն պապենական նոէրը, եւ Եղիշէին տալով ասաց. «այս եմ թողնում քեզ իմ վերջին յիշատակ, առ, թող պարսկի ձեռքը չդիպչէ դրան»...

Վանքերը եւ եկեղեցիները շատ ունէին այսպիսի սրբութիւններ, որոնք ամփոփում էին իրանց մէջ այս եւ այն ճգնաւորի, առաքեալի, մարտիրոսի եւ եկեղեցոյ հարց մարմնի մասունքները: Բնրանք պատած էին արծաթով եւ ոսկով, զարդարած էին թանկագին քարերով եւ պահւում էին նոյնպէս թանկագին արկղների մէջ: Եթէ աւելացնենք դրանց վրայ արծաթի բուրվառները, սկիհները, աշտանակները, արծաթակազմ աւետարանները եւ ազնիւ մետալներից կազմոած այլ եկեղեցական անօթները, կարելի է ասել, որ ազգի հարստութիւնը կենտրոնացած էր այդ ժամանակ եկեղեցիների եւ վանքերի մէջ: Այդ հարստութիւնները շատ անգամ գրաւում էին մահմեդական աւարառուների շահասիրութիւնը, եւ քիչ չէր պատահում, որ վանքերի սրբութիւնները գերի էին ընկնում: Քուրդերը յարգում էին իրանց ձեռքը ընկած սրբութիւնները եւ չէին ոչնչացնում նրանց: Քուրդի համար քրիստոնէական տաճարի սրբութիւնը նոյն նշանակութիւնն ունէր, որպէս իր շէյխի տոած թիլիսմանը, որը նա կապում էր աջ թեւին թշնամու զէնքերից անխոցելի մնալու համար: Քուրդը դարձնում էր սրբազան կողոպուտը, միայն ծանրագին փրկանք ստանալէն յետոյ: Պարսիկները եւ թուրքերը այն ակնածութիւնը չունէին դէպի քրիստոնեաների սրբութիւնները. նրանք կ'ոչնչացնէին, եթէ տեսնէին, որ նրանցից գոյացած ոսկին ու արծաթը կարող էր աւելի գին բերել, քան թէ այն գումարը, որ ստանալու էին իբրեւ փրկանք: Իսկ փրկանքը լինում էր միշտ աւելի բարձր, քան սրբութեան արժէքը: Օրինակի համար ես կը յիշեմ մի դէպք, որը պատահեց իմ ժամանակում: Բարդուղիմէոս առաքելոյ աջը, որ գտնւում էր Հաղբակայ նոյն անունով վանքում, գերի ընկաւ պարսիկների ձեռքում: Ժողովուրդը վճարեց սուրբ աջի ծանրութեան չափով տասն անգամ ոսկի եւ փրկեց գերին: Ամբողջ գաւառի կանայքը զրկոեցան